տական գրականութեան մէջ։ Ժողովրդական բանահիւսութիւնը ժողովրդի կենդանի ոգու արտադրութիւնն է։ Ինչ զգացել է ժողովուրդը, ինչ թելադրել է նորա առողջ բանականութիւնը, այն էլ դրոշմուած է նորա բանահիւսութեան մէջ ճիշտ այնպէս, ինչպէս լուսանկար մեքենայի ապակու վերայ դրոշմւում է պատկերը։ Կեղծիքը անհատի գործ է. բազմութեան մի երկ, որ անցել է ժողովրդի հոգւոյ ամենամանր խորշերից, ստութիւն, կեղծիք բովանդակել չի կարող. կարդալով ժողովրդական որևէ երկ, ընթերցողը իսկոյն ըմբռնում է նորա հայեացքը նկարագրուած իրողութեան կամ անձնաւորութեան մասին։ Ժողովրդական բանահիւսութեան մէջ ստութիւնը, անարդարութիւնը երբէք ծածկուած չենք տեսնում, այլ միշտ ընկճուած կամ հակակրութեամբ դատապարտուած [1])։

Ժողովրդական բանահիւսութիւնը հարուստ է և իւր վսեմ գաղափարներով. բանահիւսութեան մէջ են արտայայտուած ժողովրդի գերակայ գաղափարները և շատ անգամ զուտ գեղարուեստական ձևով։ Անձնազոհութեան, բարոյականութեան, մաքուր սիրոյ, ամուսնական հաւատարմութեան, ազնուութեան, քաջութեան և այլ այսպիսի բարձր ու վսեմ գաղափարների՝ ընթերցողը ամեն քայլափոխում պատահում է բանահիւսութեան մէջ։ Այսպիսի գաղափարներ և զգացումներ՝ մարմնացած ժողովրդական հերոսների անձնաւորութեամբ՝ ժողովրդական բանահիւսութեան ակնյայտնի առաւելութիւններն են կազմում։

Բանահիւսութիւնը իւր գաղափարական կողմերով, գեղարուեստական և անպաճոյճ ձևերով, պարզ բովանդակութեամբ միանգամայն հասկանալի է ժողովրդին, ուստի և թանկագին նորա համար. բանահիւսութեամբ է նա կազմակերպում իւր մտաւոր և բարոյական էութիւնը, բանահիւսութեամբ է առաջնորդւում դէպի գաղափարական և գեղասիրական աշխարհը։ Անհատը՝ իւր սիրած ժողովրդական երգը երգելով, առած կամ առակ ասելով՝ արտա-

---

[1]) Ѳ. Буслаевъ-ի Историческіе Очерки Русской Народной Словесности и Искусства.